

Կարեն Թումանյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ kartumanyan@yahoo.com

DOI: 10.53614/18294952-2025.2-68

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածը վերլուծում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական կարգավորումների սահմանադրաիրավական հիմքերը՝ ելակետ ընդունելով Սահմանադրության 62-րդ և 12-րդ հոդվածների համադրությամբ ձևավորված՝ վնասի հատուցման ինստիտուտի ոչ միայն հետադարձ, այլև կանխարգելիչ-կարգավորիչ նշանակությունը:

Հոդվածը ցույց է տալիս, որ գործող քաղաքացիական օրենսդրությունը կառուցված է վնասի հատուցման դասական մոդելի վրա, որը չի ապահովում բնապահպանական վնասի հանրային, բազմադրյուր և երկարաժամկետ բնույթի արձագանք: Նյութական իրավունքում բացակայում են «շրջակա միջավայրին պատճառված վնաս» և «միջավայրային էական վտանգ» հասկացությունների սահմանումները, իսկ դատավարական իրավունքում՝ ապացուցման բեռի հատուկ կանոններ, ինչի հետևանքով տուժող կողմը հաճախ հայտնվում է անհամաչափ ծանր ապացուցման բեռի առաջ:

Համեմատական վերլուծության համար ընտրվել են ԵՄ 2004/35/EC դիրեկտիվով ամրագրված «աղտոտողը վճարում է» սկզբունքը և գերմանական վտանգի կանխարգելման ինստիտուտը, որոնք թույլ են տալիս իրավական միջամտություն ռիսկի փուլում:

Արդյունքում առաջարկվում է Քաղաքացիական օրենսգր-

քում ներդնել բնապահպանական վնասին նվիրված ինքնուրույն գլուխ, ամրագրել վերոնշյալ հասկացությունները, սահմանել հայցային վաղեմության չկիրառում, ինչպես նաև դատավարական մակարդակում ներդնել ապացուցման բեռի խառը մոդել և կանխարգելիչ հայցերի արագացված ընթացակարգ:

Հիմնաբառեր. շրջակա միջավայրին պատճառված վնաս, կանխարգելիչ պաշտպանություն, «միջավայրային էական վտանգ», դատական փորձաքննություն, հանրային շահ, արդյունավետ դատական պաշտպանություն, «աղտոտողը վճարում է» սկզբունք:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածը ամրագրում է հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը, ներառյալ օրենքով նախատեսված դեպքերում իրավաչափ վարչարարության հետևանքները, և այդ կերպ ձևավորում է պետության պատասխանատվության ընդլայնված սահմանադրական մոդել: Շրջակա միջավայրի ոլորտում այս կարգավորումը պետք է մեկնաբանվի նաև Սահմանադրության 12-րդ հոդվածի լույսի ներքո, որը պետությանը պարտադրում է խթանել բնապահպանական պաշտպանությունը՝ կայուն զարգացման և միջսերնդային պատասխանատվության սկզբունքներով, իսկ յուրաքանչյուրին՝ հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Սահմանադրական այս երկու դրույթների համադրությունը թույլ է տալիս վնասի հատուցման իրավունքը դիտարկել ոչ միայն որպես հետադարձ փոխհատուցման մեխանիզմ, այլ նաև որպես կանխարգելիչ և կարգավորիչ գործիք բնապահպանական կառավարման մեջ՝ ուղղված էկոլոգիական ռիսկերի նվազեցմանը, հանրային շահի պաշտպանությանը և ապագա սերունդների իրավունքների ապահովմանը:

Շրջակա միջավայրի պահպանությունը ժամանակակից իրավական համակարգերում աստիճանաբար ձեռք է բերում սահմանադրական արժեքի նշանակություն՝ անմիջականորեն առնչվելով մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ իրացման հետ: Կյանքի, առողջության և արժանապատիվ ապրելու իրավական ապահովումը այլևս հնարավոր չէ դիտարկել շրջակա միջավայրից անկախ, ինչի հետևանքով իրավական պետությունների առջև դրվում է խնդիր ձևավորելու այնպիսի նյութական և դատավարական մեխանիզմներ, որոնք թույլ կտան ոչ միայն արձագանքել արդեն իսկ պատճառված բնապահպանական վնասին, այլև կանխարգելել շրջակա միջավայրին սպառնացող վտանգները:

Շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման քաղաքացիաիրավական կարգավորումները ներկայումս հիմնականում կառուցված են ընդհանուր իրավական պատասխանատվության մոդելի շրջանակում: Սակայն այդ մոտեցումը լիարժեք չի արտացոլում բնապահպանական վնասի առանձնահատկությունները՝ դրա հանրային բնույթը, երկարաժամկետ հետևանքները, ինչպես նաև բնական միջավայրի վերականգնման առաջնահերթությո-

յունը զուտ դրամական փոխհատուցման նկատմամբ: Միաժամանակ գործող քաղաքացիական օրենսդրությունը չի պարունակում շրջակա միջավայրի պահպանության հարաբերություններին նվիրված ինքնուրույն նյութական ենթակարգավորում, ինչի հետևանքով բնապահպանական վեճերի լուծման ընթացքում առաջանում են իրավական անորոշություններ և կիրառական դժվարություններ:

Հոդվածով սահմանվում է «միջավայրային էական վտանգ» նոր տերմին-նաբանական հասկացությունը և կատեգորիայի օրենսդրական ամրագրման հիմնավորումը՝ որպես շրջակա միջավայրին պատճառվող վնասի կանխարգելիչ իրավական պաշտպանության միջոց:

Առանձնահատուկ խնդիր է այն հանգամանքը, որ Քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուկ իրավական բնութագրիչներ և չի նախատեսում այն նվազագույն իրավական շեմը, որի առկայության դեպքում վնասը պետք է դիտարկվի որպես դատական պաշտպանության առարկա:

Այս բացը խոչընդոտում է ինչպես իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից նման գործերի քննության ընթացքում, այնպես էլ հանրային շահի արդյունավետ պաշտպանությանն ընդհանրապես: Շրջակա միջավայրին պատճառված վնասի առանձնահատկությունները և մարդու իրավունքների եվրոպական դատական պրակտիկայում ձևավորված մոտեցումները լուրջ հիմքեր են ստեղծում վերանայելու նաև հայցային վաղեմության կիրառելիությունը բնապահպանական վեճերում:

Նույն համատեքստում քաղաքացիական դատավարության օրենսդրությունը ևս չի նախատեսում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոններ միջավայրային վեճերի համար, ինչի հետևանքով տուժող կողմը հաճախ կանգնում է անհամաչափ բարդ ապացուցման պահանջների առաջ:

Շրջակա միջավայրին առնչվող դատական վեճերը և դրանց հնարավոր ծանր ու անդամալի հետևանքները պահանջում են, որ դատարանների տիրապետության տակ լինեն մասնագիտական և ինստիտուցիոնալ լրացուցիչ գործիքներ՝ ապահովելու համար գիտականորեն հիմնավորված, կանխարգելիչ և հանրային շահին և արդար դատաքննության իրավունքին համահունչ դատական ակտեր:

Մեթոդ

Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ: Այս մեթոդները թույլ են տվել բացահայտել շրջակա միջավայրի անվտանգության սահմանադրական նշանակությունը և որոշել պետական վերահսկողության կանխարգելիչ մեխանիզմները ամրապնդելու անհրաժեշտությունը:

1. Վնասի հատուցման քաղաքացիաիրավական համակարգը սահմանադրական պաշտպանության շրջանակներում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ վնասի հատուցման իրավունքը համարվում է «սեփականություն», եթե այն արդեն ձևաչափված է ազգային օրենսդրությամբ կամ անձի համար առաջացնում է օրինաչափ ակնկալիք այն ստանալու համար: Այդ դեպքում փոխհատուցման պահանջը դիտարկվում է ոչ թե պարզապես ընթացակարգային կարգավորում, այլ սեփականության պաշտպանության ենթակա իրավունք (Պրետու Կոմպանիա Նավիերա Ս.Ա. և ուրիշներ ընդդեմ Բելգիայի):

Այս մոտեցմանը համահունչ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքը ամրագրում է որպես արդյունավետ սահմանադրական պաշտպանության կարևոր երաշխիք: Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանադրական մակարդակում երաշխավորում է հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքը՝ ներառելով նաև օրենքով նախատեսված դեպքերում իրավաչափ վարչարարության հետևանքները, և ձևավորում է պետության իրավական պատասխանատվության ընդլայնված մոդել՝ որպես արդյունավետ իրավապաշտպանության առանցքային բաղադրիչ:

Շրջակա միջավայրի ոլորտում այս կարգավորումը լրացվում է Սահմանադրության 12-րդ հոդվածով, որը պետությանը պարտադրում է իրականացնել կայուն զարգացման վրա հիմնված բնապահպանական քաղաքականություն և ամրագրում է յուրաքանչյուրի մասնակցային պարտականությունը շրջակա միջավայրի պահպանության գործում, ինչի հետևանքով վնասի հատուցման ինստիտուտը ստանում է ոչ միայն հետադարձ, այլև կանխարգելիչ սահմանադրաիրավական նշանակություն մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համակարգում (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 12, 62):

Սահմանադրական կարգավորումը տարածվում է ոչ միայն ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության, այլև օրենքով նախատեսված դեպքերում իրավաչափ վարչարարության արդյունքում առաջացած վնասի վրա՝ ձևավորելով պատասխանատվության ընդլայնված մոդել:

Այդպիսի կարգավորումը առանձնահատուկ նշանակություն է ստանում բարձր հանրային ռիսկ պարունակող ոլորտներում, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում, որտեղ անգամ օրինական վարչական որոշումները կարող են հանգեցնել էկոլոգիական վնասի և մարդու իրավունքների սահմանափակման, իսկ օրենսդրին պարտադրվում է մշակել փոխհատուցման արդյունավետ պայմաններ ու ընթացակարգեր՝ ապահովելով ինչպես սեփականության իրավունքի պաշտպանությունը, այնպես էլ կանխարգելման և հանրային շահի գերակայության իրացումը:

Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վնասի հատուցման ընդհանուր կարգավորումներ, որոնք ամրագրված են 60-րդ գլխում՝ «վնաս

պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» վերնագրով: Նշված դրույթները ձևավորում են քաղաքացիաիրավական պատասխանատվության դասական մոդելը, որը կիրառելի է վնասի հիմնական տեսակների նկատմամբ:

Վնասի իրավական հասկացությունը սահմանվում է Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, ըստ որի վնաս է համարվում անձի գույքային միջոցներում առաջացած կորուստը՝ ներառյալ ակտիվների կորուստը կամ վնասումը, անձի կրած ծախսերը, ինչպես նաև այն եկամուտը, որը տվյալ անձը կստանար իր իրավունքը չխախտվելու դեպքում (բաց թողնված օգուտ):

Վնասի հատուցման ընդհանուր հիմքը ձևակերպված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածում, որի համաձայն ուրիշի գույքին, անձին կամ այլ բարիքներին պատճառված վնասը ենթակա է լրիվ փոխհատուցման վնաս պատճառած անձի կողմից, եթե օրենքով նախատեսված չեն այլ կարգավորումներ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 60-րդ, հոդվ. 17, 1064):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վնասի հատուցման ինստիտուտը կառուցված է դասական քաղաքացիաիրավական պատասխանատվության մոդելի վրա, ըստ որի վնասի հատուցման պարտավորությունը ծագում է միայն այն դեպքում, երբ միաժամանակ առկա են չորս հիմնական նյութական վավերապայմաններ՝ հակաօրինական վարքագիծը կամ պաշտպանված իրավունքի խախտումը, իրական և փաստացի վնասը, այդ վարքագծի և վնասի միջև ուղղակի պատճառահետևանքային կապը, ինչպես նաև պատասխանատվության ենթակա անձի մեղքը կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության հիմքը (ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ թիվ ԵԴ/26800/02/18, 30.10.2024; թիվ ՎԴ/0326/05/20, 21.05.2024; թիվ ԵԴ/21831/02/19, 03.02.2023; թիվ ԵՔԴ/0036/02/08, 13.03.2009):

Այս համակարգում Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնավորվել ենթադրյալ կամ հավանական վնասի վրա: Դատարանները պարտավոր են հաստատել վնասի կոնկրետ դրսևորումը և դրա չափը՝ օրենսդրությամբ ճանաչված չափանիշների հիման վրա: Նույն կերպ, պատճառահետևանքային կապը պետք է լինի անմիջական և ապացուցված, իսկ դրա բացակայությունը բացառում է քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառումը (ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 որոշում, 13.02.2009):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների համաձայն՝ պատասխանատվության առաջացման կանխավարկածային տարրը հանդիսանում է պարտապանի մեղքը, որի բացակայությունը պետք է ապացուցի հենց վնաս պատճառողը, եթե օրենքով նախատեսված չէ օբյեկտիվ (առանց մեղքի) պատասխանատվության այլ ընթացակարգ:

Դատավարական հարթությունում այս ընդհանուր կանոնը լրացվում է ապացուցման բեռի դասական բաշխմամբ, որի համաձայն վնաս կրած անձը պարտավոր է ապացուցել ոչ օրինաչափ վարքագիծը, վնասի փաստը և պատ-

ճառահետևանքային կապը, մինչդեռ պատասխանատվության ենթակա անձը կրում է իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը:

Այսպիսով, գործող ներպետական իրավական կարգավորումների ուժով վնասի հատուցման ընդհանուր ընթացակարգը, Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունների լույսի ներքո, բնութագրվում է որպես հետադարձ պատասխանատվության վրա հիմնված դասական քաղաքացիաիրավական համակարգ, որը կենտրոնացած է արդեն իսկ առաջացած վնասի փաստի հաստատման վրա և սահմանափակ կերպով է արձագանքում ռիսկերի կանխարգելման կամ բնապահպանական առանձնահատկություններով պայմանավորված հանրային շահերի պաշտպանության պահանջներին (Faure, 2003, էջ 8–15 Sands, Peel, Fabra, MacKenzie, 2018, էջ 700–772):

Հայաստանի իրավական համակարգում ոլորտային օրենսդրությամբ առկա են շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման որոշակի հաշվարկման (մասնավորապես՝ կենդանական և բուսական աշխարհին հասցված վնասի սակագնային գնահատումներ, ինչպես նաև ջրային, անտառային կամ ընդերքօգտագործման ոլորտներում վերականգնման պարտավորություններ), սակայն այս կարգավորումները ձևավորում են առավելապես արդեն պատճառված վնասի հատուցման և պատասխանատվության միջոց և չեն կարգավորում վնասի կանխարգելման ինստիտուտը:

Ընդհանուր կանոնների համաձայն վնասի հատուցման ինստիտուտը կառուցված է հետևյալ բաղադրատարրերով:

Վնասի հասկացությունը

Փիլիսոփայական դիտանկյունից «վնասը» հանդիսանում ոչ միայն որպես նյութական կորուստ, այլև որպես անձի բարեկեցության, ինքնավարության և արժանապատվության խաթարում, որը կարող է առաջանալ ուրիշի գործողության կամ անգործության հետևանքով և դրսևորվել ֆիզիկական, հոգեկան կամ սոցիալական տուժման ձևերով:

Այս ընկալման հիմքում ընկած է այն կանխավարկածը, որ մարդն ունի բարոյապես և սոցիալապես նշանակալի շահերի շրջանակ, որոնց խախտումը կարող է որակվել որպես վնաս: Իրավափիլիսոփայական հարթությունում այդ փաստական տուժումը ձեռք է բերում նորմատիվ նշանակություն՝ կապվելով սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական պաշտպանվող շահի խախտման հետ և, դառնալով պատասխանատվության վերագրման հիմնարար նախապայման, որով «վնաս» հասկացությունը հանդիսանում է «միջնորդ» փաստական հետևանքի և իրավական գնահատականի միջև (Mill, J. S., 1859, On Liberty, էջ 9–10):¹

Արդարության տեսությունների շրջանակում վնասը մեկնաբանվում է որպես բարոյական հավասարակշռության խախտում, որը ծնում է վերականգնման, փոխհատուցման կամ ուղղման պահանջ, իսկ ժամանակակից փիլիսոփայական քննարկումներում այդ հասկացությունը զգալիորեն ընդլայնվում

1 Ջոն Ստյուարտ Միլը ձևակերպվում է «harm principle»-ը՝ ըստ որի վնասի առկայությունը կարող է արդարացնել պետության միջամտությունը անհատի ազատության ոլորտում: (Mill, 1859, էջ 9–10)

է՝ ընդգրկելով նաև ապագա կամ հավանական տուժումները, հատկապես բնապահպանական և տեխնոլոգիական ռիսկեր պարունակող իրավիճակներում: Այդպիսի մոտեցումը տեղափոխում է ուշադրության կենտրոնը բացառապես արդեն պատճառված վնասից դեպի վտանգի կանխարգելում և ռիսկերի կառավարում՝ հետագայում ազդելով իրավունքի զարգացման վրա և նպաստելով կանխարգելման ու նախազգուշության սկզբունքների ձևավորմանը՝ որպես ժամանակակից իրավակարգերի կառուցվածքային տարրեր²:

Ներպետական դատական պրակտիկայում, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն, վնասի հատուցման պահանջի բավարարման առաջին և հիմնարար նախապայմանն է վնասի փաստացի առկայության և դրա չափի ապացուցումը:

Վճռաբեկ դատարանը մի քանի գործերով ընդգծում է, որ ենթադրյալ կամ հավանական վնասը բավարար չէ քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնելու համար: Պահանջվում է կոնկրետ, օբյեկտիվորեն արձանագրված և հաշվարկելի վնաս, որը կարող է արտահայտվել ինչպես նյութական կորուստների, այնպես էլ բաց թողնված օգուտի կամ ոչ նյութական վնասի տեսքով՝ օրենքով նախատեսված դեպքերում (ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3197/02/17 որոշում, 28.10.2022):

Նման մոտեցումը համահունչ է նաև Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումներին, որոնցում շեշտվում է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության մեխանիզմները պետք է ապահովեն իրավական որոշակիություն և կանխատեսելիություն՝ բացառելով զուտ ենթադրությունների կամ չհաստատված ռիսկերի հիման վրա պատասխանատվության առաջացում (ՀՀ սահմանադրական դատարանի որոշում թիվ ՍԴՈ-753, 13.05.2008):

Եվրոպական դատարանի պրակտիկայում վնասի փաստի ապացուցման հարցը բնապահպանական գործերում ներառում է ոչ միայն նյութական կորուստները, այլև կյանքի որակի էական վատթարացումը, առողջության ռիսկերը կամ բնակելի միջավայրի խաթարումը: Եվրոպական դատարանը շրջակա միջավայրի գործերով իր նախադեպերում արձանագրել է, որ որոշ իրավիճակներում բավարար կարող է լինել անձի մասնավոր կյանքի վրա ծանր ազդեցության հաստատումը՝ նույնիսկ եթե փաստացի վնասը ամբողջապես հաշվարկելի չէ: Ներպետական պրակտիկան որոշակի առումով չի համապատասխանում այս մոտեցմանը (վնասի չափը հաշվարկված չլինելու պարագայում պատասխանատվության վրա հասնելը):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը փաստում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի հասանելիության իրավունքը կարող է խախտվել այն դեպքերում, երբ ազգային դատարանները դիմումատուների վրա դնում են անհամաչափ ծանր ապացուցման բեռ, որը գործնականում զրկում է նրանց արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունից:

2 Ջոն Ռոլզի «Արդարության տեսության» մեջ փոխհատուցումն ու վնասի վերականգնումը դիտարկվում են որպես արդարության սկզբունքների գործնական դրսևորումներ (Rawls, 1971, էջ 3-4):

Կլիմայական վեճերի համատեքստում Դատարանը հատուկ շեշտել է, որ վնասի և ռիսկի պատճառահետևանքային կապի հաստատումը, պետական քաղաքականության ազդեցության գնահատումը և համապատասխան գիտական տվյալների վերահսկողությունը մեծապես գտնվում են պետական մարմինների ձեռքում, մինչդեռ անհատները չունեն համարժեք տեղեկատվական հնարավորություններ: Այդ պայմաններում ապացուցողական պահանջների խիստ կիրառումը կարող է հակասել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակին, քանի որ ենթադրվող վնասը հաճախ ունի կառուցվածքային և երկարաժամկետ բնույթ (Case of Verein KlimaSeniorinnen Schweiz» and Others v. Switzerland):

Անօրինական գործողությունը (ոչ իրավաչափ վարքագիծ):

Փիլիսոփայական գրականության մեջ «անօրինական գործողությունը» սովորաբար մեկնաբանվում է որպես այնպիսի վարքագիծ կամ պետական միջամտություն, որը հակասում է վավեր իրավական նորմին և այդպիսով խաթարում է անձանց իրավական կարգավիճակը: Այս մոտեցումը բնորոշ է, մասնավորապես, իրավական պոզիտիվիզմին, ըստ որի իրավախախտման առանցքը նորմի ուժի մեջ լինելու փաստն է³:

Միաժամանակ իրավունքի նորմատիվ հիմնավորումը կապվում է ազատության և հավասարության գաղափարների հետ աշխատություններում, որտեղ անօրինականությունը դիտարկվում է որպես այնպիսի վարք, որը անհամատեղելի է անձանց ազատությունների համընդհանուր համատեղելիության սկզբունքի հետ⁴:

Արդարության տեսությունների շրջանակում անօրինական արարքի կատարումը կապվում է հասարակական արդարության հիմնարար սկզբունքների խախտման հետ, ինչի արդյունքում պատասխանատվությունը հանդես է գալիս ոչ միայն որպես իրավական հետևանք, այլ որպես նորմատիվ պահանջ⁵:

Ներպետական իրավական պրակտիկայի համաձայն՝ վնասի հատուցման պարտավորությունը ծագում է միայն այն դեպքում, երբ վնասը պատճառված է հակաօրինական վարքագծի արդյունքում, այսինքն՝ գործողությամբ կամ անգործությամբ, որը հակասում է օրենքի պահանջներին կամ միմյանց միջև առաջացած պայմանավորվածության խախտման հետևանքով (պայմանագրային պարտավորություններ): Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ օրինական գործունեության շրջանակում պատճառված վնասը, որպես կանոն, չի հանգեցնում հատուցման պարտավորության, բացառությամբ այն դեպքերի, երբ

3 Հերբերտ Լայոնել Ադոլֆուս Հարթը անօրինական գործողության առանցքային չափանիշը մեկնաբանվում է որպես վավեր իրավական նորմի խախտում՝ անկախ տվյալ վարքագծի բարոյական գնահատականից (Hart, 1961, էջ 79–88, 181–185):

4 Իմանուել Կանտը իրավունքի նորմատիվ հիմքը կապում է անձանց ազատության համընդհանուր համատեղելիության և իրավական հավասարության սկզբունքների հետ (Kant, 1797, էջ 24–25):

5 Ջոն Ռոլզը անօրինական կամ անհիմն միջամտությունը մեկնաբանվում է որպես հասարակական արդարության հիմնարար սկզբունքների խախտում՝ առաջ բերելով նորմատիվ վերականգնման և պատասխանատվության պահանջ (Rawls, 1971, էջ 52–65):

օրենսդիրը նախատեսել է օբյեկտիվ պատասխանատվության մոդել կամ հատուկ ռեժիմներ բարձր վտանգավորության աղբյուրների համար:

Պատճառահետևանքային կապը

Փիլիսոփայության մեջ պատճառահետևանքային կապը (կաուզալություն) վերաբերում է այն հարցին, թե ինչու և ինչպես է մի իրադարձություն կամ երևույթ առաջացնում մյուսը: Այն հանդիսանում է գիտելիքի ամենահին ու հիմնարար խնդիրներից մեկը, քանի որ առանց պատճառականության գաղափարի դժվար կլիներ բացատրել բնության ընթացքը, մարդկային գործողությունների կառուցվածքը կամ պատմական գործընթացների զարգացումը:

Իրավագիտության մեջ պատճառահետևանքային կապը հանդիսանում է որպես պատասխանատվության վերագրման նախապայման՝ պահանջելով ոչ միայն փաստացի կապի հաստատում վարքագծի և վնասի միջև, այլ նաև նորմատիվ գնահատում, կանխատեսելիության և արդար բաշխման չափանիշներով:

Ազատ կամքի փիլիսոփայական խնդրում պատճառականությունը դառնում է մարդու պատասխանատվության սահմանների որոշման առանցքային հանգույց՝ միաժամանակ առնչվելով դետերմինիզմի և ինքնավար ընտրության հնարավորության շուրջ ընթացող բանավեճերին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների ուժով պարտապանի պատճառական կապը հաստատվում է այն դեպքում, երբ պարտապանի վարքագծի և առաջացած վնասի միջև անմիջական ու իրավաբանորեն ձանաչելի պատճառահետևանքային կապը առկա է: Դատարանի դիրքորոշմամբ՝ միջնորդավորված, հեռավոր կամ հիպոթետիկ պատճառական կապերը, որպես կանոն, չեն կարող բավարարել քաղաքացիաիրավական պատասխանատվության պայմանները:

Մեղքի կանխավարկածը

Մեղքի փիլիսոփայական կանխավարկածը բարոյափիլիսոփայական ավանդույթում հիմնվում է անձի ինքնավարության, բանական դատողության և այլընտրանքային վարքագծի հնարավորության վրա: Իրավափիլիսոփայական հարթությունում վերափոխվում է քաղաքացիական պատասխանատվության նորմատիվ կառուցվածքի հիմնասյուներից մեկի՝ մեղքի սկզբունքի մեջ:

Դասական մոտեցման համաձայն, ինչպես Արիստոտելի կամավոր և ոչ կամավոր արարքների տարբերակումը, այնպես էլ Կանտի կամքի ինքնավարության դոկտրինան ենթադրում են, որ անձին պատասխանատվության ենթարկել կարելի է միայն այն դեպքում, երբ վնասը վերագրելի է նրան որպես գիտակցված կամ առնվազն կանխատեսելիորեն վերահսկելի վարքագծի արդյունք:

Քաղաքացիական իրավունքում այս կանխադրույթները իրավական կար-

գավորում են ստանում պատշաճ պարտավորության, անձի ողջամտության չափանիշի և կանխատեսելիության կատեգորիաների միջոցով՝ ձևավորելով այն սկզբունքը, ըստ որի վնասի հատուցումը սովորաբար պայմանավորված է ոչ միայն պատճառահետևանքային կապի առկայությամբ, այլ նաև իրավախախտի մեղավոր վերաբերմունքով իր վարքագծի նկատմամբ: Այդ կերպ մեղքի գաղափարը հանդես է գալիս որպես կամուրջ բարոյական պատասխանատվության փիլիսոփայական տեսության և քաղաքացիաիրավական պատասխանատվության նորմատիվ ձևաչափի միջև:

Քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 2-րդ կետը ձևակերպում է մեղքի կանխավարկածը՝ ըստ որի վնաս պատճառած անձը համարվում է մեղավոր, եթե չի ապացուցում հակառակը: Վճռաբեկ դատարանի պրակտիկայում այս կանոնը մեկնաբանվում է որպես պատասխանատվության ընդհանուր ռեժիմ, որը կարող է զիջել միայն այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է օբյեկտիվ պատասխանատվություն կամ հատուկ դեպքեր, որի առաջացման պայմաններում «մեղքի» առկայությունը էական նշանակություն չունի:

2. Շրջակա միջավայրի պաշտպանության իրավական բացերը

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոլորտային օրենսդրությամբ առկա են շրջակա միջավայրին պատճառված վնասի **որոշակի հաշվարկման և փոխհատուցման մեխանիզմներ** (մասնավորապես՝ կենդանական և բուսական աշխարհին հասցված վնասի սակագնային գնահատումներ, ինչպես նաև ջրային, անտառային կամ ընդերքօգտագործման ոլորտներում վերականգնման պարտավորություններ), սակայն այս կարգավորումները ձևավորում են առավելապես **հետադարձ պատասխանատվության հատվածական ռեժիմ** և չեն ուղեկցվում միասնական նյութական չափորոշիչներով ու հատուկ դատավարական կանոններով, որոնք կհարմարեցվեին միջավայրային վեճերի առանձնահատկություններին:

Արդյունքում բացակայում են «միջավայրային էական վտանգ» երևույթի և տերմինաբանության սահմանման, ռիսկի գնահատման, ապացուցման բեռի ձևերի բաշխման և կանխարգելիչ դատական պաշտպանության գործիքները, ինչի հետևանքով դատարանները փաստացի սահմանափակվում են արդեն իսկ պատճառված վնասի հաստատմամբ: Դատարանները գործող կարգավորումների հիման վրա չեն կարող արդյունավետորեն քննել այնպիսի վեճեր, որոնք ուղղված են ոչ թե վնասի փոխհատուցմանը, այլ շրջակա միջավայրի ապագա սպառնալիքների կանխմանը:

Քաղաքացիաիրավական ընդհանուր կարգավորումները, որոնք կառուցված են վնասի հատուցման դասական պատասխանատվության մոդելի վրա, կառուցվածքայնորեն անբավարար են շրջակա միջավայրին պատճառված վնասի կանխարգելման և հատուցման համար: Այդ անբավարարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող նորմերը մշակված են հիմնականում անհատական գույքային կամ անձնական շահերի պաշտպանության համար և չեն արտացոլում բնապահպանական վնասի բազմաշերտ,

հանրային և երկարաժամկետ բնույթը:

Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն «(...) բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով (...)»:

Քաղաքացիական օրենսգիրքը, բացի վկայակոչված ձևակերպումից, շրջակա միջավայրի պահպանության հարաբերություններին վերաբերվող այլ կարգավորում չի պարունակում:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտային օրենսդրությունը՝ ներառյալ բնապահպանական իրավախախտումներով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասների հատուցման սակագների մասին կարգավորումները, ծխախոտային արտադրատեսակների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման մասին օրենքը, ինչպես նաև Հողային, Ջրային և Անտառային օրենսգրքերը, պարունակում են առանձին օբյեկտների՝ հողի, ջրերի, անտառների, կենսաբազմազանության կամ մարդու առողջության նկատմամբ պատճառված վնասի հաշվարկման և փոխհատուցման հատուկ մեխանիզմներ: Սակայն այդ հատվածական կարգավորումները հիմնականում կառուցված են արդեն տեղի ունեցած վնասի արձանագրման և հետադարձ փոխհատուցման տրամաբանության վրա և չեն ձևավորում միասնական նյութաիրավական համակարգ «միջավայրային էական վտանգի» կանխարգելման համար:

Այսպիսով, այն դեպքերում, երբ առկա է էկոլոգիական վնասի իրական և գիտականորեն հիմնավորված վտանգ, գործող իրավակարգը դեռևս չի ապահովում կանխարգելիչ միջամտության ամբողջական մեխանիզմներ, որոնք դատարաններին և վարչական մարմիններին թույլ կտային արձագանքել ոչ միայն արդեն պատճառված վնասին, այլև միջավայրային էական վտանգի առաջացմանը:

Առաջին հերթին, սույն գիտական հոդվածի առանցքային ելակետն այն է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներկայումս չի պարունակում «շրջակա միջավայրին պատճառված վնաս» հասկացության հստակ, համակարգային և միջավայրային հարաբերություններին համապատասխանեցված սահմանում:

Այս բացը հանգեցնում է նրան, որ բնապահպանական վեճերում դատարանները հարկադրված են կիրառել վնասի հատուցման ընդհանուր քաղաքացիաիրավական կատեգորիաներ, որոնք չեն արտացոլում էկոլոգիական վնասի հանրային, բազմադրյուր, կուտակային և երկարաժամկետ բնույթը և սահմանափակում են կանխարգելիչ միջամտության հնարավորությունները:

«Շրջակա միջավայրին պատճառված վնաս» հասկացությունը պետք է օրենսդրությամբ ձևակերպվի հետևյալ սահմանմամբ. «Շրջակա միջավայրին պատճառված վնաս» է համարվում մարդու կամ հանրային իշխանության գործողության կամ անգործության հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջրեր, հող, կենսաբազմազանություն, էկոհամակարգեր)

ֆիզիկական, քիմիական, կենսաբանական կամ էկոլոգիական վիճակի փաստացի վատթարացումը, դրանց բնական վերականգնման կարողության նվազեցումը կամ իրավականորեն պաշտպանվող բնապահպանական շահերի խաթարումը, ինչպես նաև այնպիսի վարքագծի կամ գործունեության ստեղծած իրավիճակը, որը տվյալ պահին դեռևս չի արտահայտվել լիարժեք նյութական հետևանքով, սակայն օրյեկտիվորեն պարունակում է գիտականորեն հիմնավորված և իրական վտանգ նման վնասի առաջացման համար և ենթակա է կանխարգելիչ իրավական միջամտության:

Երկրորդ, հողվածի հաջորդ հիմնարար թեզն այն է, որ գործող օրենսդրությունը չի ձանաչում «միջավայրային էական վտանգ» հասկացությունը որպես ինքնուրույն իրավական կատեգորիա, ինչպես նաև տեսական մեկնաբանությամբ սահմանված չէ նման հասկացության գոյությունը, ինչի պատճառով սույն հողվածի շրջանակում այն առաջարկվում է որպես հեղինակային գիտական տերմին՝ կանխարգելիչ դատական պաշտպանության նյութաիրավական հիմք ձևավորելու նպատակով:

Նոր տերմինաբանության ձևակերպման անհրաժեշտությունն առաջացել է այն պատճառով, որ գործող կարգավորումներով դատարանները հիմնականում կարող են քննության առարկա դարձնել շրջակա միջավայրին պատճառված վնասի արդյունքում առկա մարդու իրավունքներին պատճառված հետևանքային վնաս, այլ ոչ թե վնասի կանխարգելումը: Այս մոտեցմամբ ապահովվում է շրջակա միջավայրի պահպանության ռիսկերի կանխարգելումը (Hammit, Rogers, Sand, Wiener, 2011, էջ 26–28, 519–520):

Շրջակա միջավայրին պատճառված վնասի իրավական հասկացության բացակայությունը իրավակիրառ պրակտիկայում դժվարացնում է ինչպես նյութաիրավական գնահատումը, այնպես էլ դատավարական պաշտպանության արդյունավետ կազմակերպումը, ուստի անհրաժեշտ է այդ կատեգորիայի օրենսդրական հստակեցում, սակայն այն պետք է կառուցվի ոչ թե բացառապես բարձր ինտենսիվության կամ արդեն իսկ արտահայտված վնասների տրամաբանությամբ, այլ նվազագույն իրավական շեմի վրա՝ ընդգրկելով նաև այնպիսի ազդեցությունները, որոնք իրենց բնույթով տարածված, կուտակային կամ դանդաղ զարգացող են և կարող են ողջամտորեն սպառնալ էկոհամակարգերի վիճակին կամ մարդու հիմնարար իրավունքների իրականացման պայմաններին:

«Միջավայրային էական վտանգ» հասկացությունը պետք է ձևակերպվի հետևյալ սահմանմամբ.

«Միջավայրային էական վտանգ»՝ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործունեությունից, ծրագրից, որոշումից կամ անգործությունից բխող այնպիսի իրավիճակ, որը դեռևս չի հանգեցրել նյութական վնասի, սակայն առկա գիտական տվյալների և մասնագիտական գնահատումների հիման վրա պարունակում է շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի խաթարման կամ իրավականորեն պաշտպանվող բնապահպանական շահերի վնասման իրական և էական հավանականություն և պահանջում է կանխարգելիչ կամ սահմանափակող իրավական միջամտություն:

Վճռաբեկ դատարանի մեկնաբանության ուժով, պատճառահետևանքալի կապի «անմիջական և կանխատեսելի» բնույթը, թեև լիովին հիմնավորված է դասական քաղաքացիաիրավական իրավունքի տրամաբանության մեջ, սակայն միջավայրային վեճերով հաճախ վերածվում է գրեթե անհաղթահարելի ապացուցման բեռի, քանի որ շրջակա միջավայրին պատճառած վնասը կարող է պայմանավորված լինել միաժամանակ մի քանի աղբյուրներից և դրսևորվել երկարատև ժամանակահատվածում (ՀՀ վճռաբեկ դատարանի 11.07.2024 թվականի թիվ ԿԴ/0517/02/10 որոշում):

Երրորդ, գործող քաղաքացիաիրավական կարգավորման պայմաններում շրջակա միջավայրին վերաբերող պահանջները, որպես կանոն, ենթարկվում են հայցային վաղեմության ընդհանուր կանոններին, ինչի արդյունքում դատարանները կիրառելով հայցային վաղեմության նորմերը մերժում են այդ հիմքով:⁶ Հատկանշական է, որ շրջակա միջավայրին պատճառվող վնասը շատ հաճախ կրում է շարունակական բնույթ և, հետևանքներով պայմանավորված, ուշ է բացահայտվում: Նման մոտեցումը սահմանափակում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, քանի որ բնապահպանական ռիսկերի ամբողջական ծավալը և պատճառահետևանքային կապը հաճախ պարզվում են միայն ժամանակի ընթացքում:

Այս կարգավորումը հակասում է Եվրոպական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշումներին, որոնցում ընդգծվում է պետության շարունակական պոզիտիվ պարտավորությունների գոյությունը և այն, որ ընթացակարգային խոչընդոտները չպետք է զրկեն անձանց դատարան դիմելու իրական հնարավորությունից: Önerildiz (Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի), Fadeyeva (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի), Dubetska (Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի), Tatar (Թաթարն ընդդեմ Ռումինիայի) և Di Sarno (Դի Սարոն և այլք ընդդեմ Իտալիայի)⁷ գործերի համադրությունը ցույց է տալիս, որ շարունակվող կամ աստիճանաբար ի հայտ եկող միջավայրային վնասի դեպքում ընթացակարգերի խիստ կիրառումը կարող է հակասել դատարանի դիմելու իրավունքի և անձնական կյանքի պաշտպանության եվրոպական ստանդարտներին:

Այս բոլոր հանգամանքների համադրությունը վկայում է, որ քաղաքացիական օրենսդրության գործող կարգավորումները չեն ապահովում շրջակա միջավայրին պատճառված վնասի համարժեք նյութաիրավական կարգավորում և պահանջում է կառուցվածքային վերաիմաստավորում՝ հատուկ նորմերի, կանխարգելիչ ինստիտուտների և վերականգնողական առաջնահերթությունների օրենսդրական ամրագրման միջոցով:

6 Տե՛ս Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննված թիվ ԼԴ2/0013/02/23 գործը ըստ հայցի Ազնիվ Հակոբյանի և Կամո Հակոբյան ընդդեմ Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ-ի վնասի փոխհատուցման պահանջի մասին (https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438351115)

7 Տե՛ս Önerildiz v. Turkey, GC (Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի, Մեծ պալատ, 30.11.2004թ. (զանգատ՝ 48939/99)), Fadeyeva v. Russia (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005թ. (զանգատ՝ 55723/00)), Dubetska and Others v. Ukraine, (Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի, 10.02.2011 թ. (զանգատ՝ 30499/03)), Tatar v. Romania, (Թաթարն ընդդեմ Ռումինիայի, 27/01/2009թ. (զանգատ՝ 67021/01)), Di Sarno and Others v. Italy (Դի Սարոն և այլք ընդդեմ Իտալիայի, 10.01.2012թ. (զանգատ՝ 30765/08)) գործերը:

Շրջակա միջավայրին պատճառված վնասի վերաբերյալ վեճերի արդյունավետ լուծումը կախված է ոչ միայն նյութական իրավունքի որակից, այլև այն ընթացակարգային մեխանիզմներից, որոնց միջոցով այդ իրավունքը գործնականում իրացվում է: Քաղաքացիական դատավարության օրենսդրությունը ներկայումս հիմնականում կառուցված է մասնավոր իրավունքի դասական վեճերի լուծման տրամաբանությամբ:

Քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ վեճերի քննությունը կազմակերպվում է կողմերի հավասարության, ապացուցման բեռի ընդհանուր բաշխման և դատավարական նախաձեռնողականության սկզբունքների վրա, բացառությամբ որոշ առանձնացված կատեգորիաների, ինչպիսիք են աշխատանքային (մասնակի), երեխայի լավագույն շահով պայմանավորված իրավունքների պաշտպանության և այլն, որոնց համար նախատեսված են որոշակի պարզեցված ընթացակարգեր կամ ընթացակարգային հատուկ մեխանիզմներ:

Մինչդեռ շրջակա միջավայրին առնչվող գործերի համար նմանատիպ դատավարական առանձնահատկությունների համակարգված կարգավորումները բացակայում են: Արդյունքում ձևավորվում է մի դատավարական ընթացակարգ, որտեղ բնապահպանական վեճերում տուժող կողմը հաճախ բախվում է անհամաչափ ապացուցման բեռի և փաստացի անարդյունավետ պաշտպանության վտանգի:

Նախ, ապացուցման բեռի ընդհանուր կանոնը, որը ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում, համաձայն որի յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում դրված հանգամանքները: Միջավայրային վեճերում մրցակցության նման կանոնի կիրառման պարագայում տուժող (զոհ) կողմը հայտնվում է էականորեն նվազ բարենպաստ վիճակում (Անկերլը ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը):

Դատավարական ապացուցելիության խնդիրը չեն լուծում նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված ապացույցներ պահանջելու և 65-րդ հոդվածով սահմանված ապացույցների ապահովման մեխանիզմը, քանի որ միջավայրային վեճերում ապացուցման համար էական նշանակություն ունեցող տեղեկությունների ու փաստաթղթերի գերակշիռ մասը (մոնիթորինգի տվյալներ, լիցենզավորման փաստաթղթեր, փորձագիտական հաշվարկներ, ազդեցության գնահատումներ և վարչարարական ակտեր) սովորաբար գտնվում են պետական մարմինների կամ տնտեսվարողների տիրապետության ներքո, այլ ոչ թե տուժողների:

Այդ պայմաններում գործող դատավարական կառուցակարգը, հիմնված կողմերի նախաձեռնողականության և ապացույցների ներկայացման մրցակցային դասական մոդելի վրա, չի ապահովում արդյունավետ գործիքակազմ դատարանի համար՝ հաստատելու թե «միջավայրային էական վտանգ» առկայությունը, թե «շրջակա միջավայրին պատճառված վնասը», ինչի հետևանքով կանխարգելիչ բնույթի պահանջները հայտնվում են համակարգային

անբարենպաստ դիրքում և գրկվում են լիարժեք արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունից:

Երկրորդ, գործող դատավարական կարգավորումները չեն նախատեսում պատճառահետևանքային կապի ապացուցման հատուկ կանոններ այն դեպքերի համար, երբ վնասը առաջացել է երկարատև ազդեցությունների, բազմակի աղբյուրների համադրման կամ գիտական անորոշության պայմաններում: Միջավայրային վնասը հաճախ չի դրսևորվում անմիջապես, հետևանքները կարող են ի հայտ գալ տարիներ անց, իսկ դրանց ծագումը պայմանավորված է միաժամանակ մի քանի գործոններով: Այդպիսի իրավիճակներում դատական ապացուցման մոդելը, որը հիմնված է ուղղակի և անմիջական պատճառականության հաստատման պահանջի վրա, կարող է վերածվել գրեթե անհաղթահարելի գործընթացի տուժող կողմի համար՝ անկախ նրանից, որ առկա է վնասի իրական և հանրային նշանակություն ունեցող ռիսկ:

Երրորդ, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում ապացուցման բեռի փոփոխություն կամ ազատում այն դեպքերում, երբ վեճը վերաբերում է բարձր վտանգավորություն ունեցող գործունեությանը կամ շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող գործընթացներին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդվ. 61): Միջազգային իրավական և համեմատական դատական պրակտիկայում աստիճանաբար ամրապնդվում է այն մոտեցումը, ըստ որի նման գործերում պետությունը կամ վտանգավոր գործունեություն իրականացնող սուբյեկտը պարտավորվում է ապացուցել իր գործունեության անվտանգությունը, իրավական պահանջներին համապատասխանությունը և կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը: Այդ մոտեցումը հիմնավորվում է տեղեկատվական անհամաչափությամբ, ռիսկերի կառավարման տրամաբանությամբ և հանրային շահի գերակայությամբ: Հայաստանի Հանրապետության դատավարական կարգավորումներում նման մեխանիզմի բացակայությունը սահմանափակում է դատարանների լիազորությունները հավասարակշռելու կողմերի փաստացի անհավասար դիրքերը:

Չորրորդ, շրջակա միջավայրին վերաբերող այնպիսի դատական գործերը, որոնք կապված են մարդկանց կյանքի կամ առողջության իրավունքի խախտման կամ դրա վտանգի առաջացման կամ անդառնալի էկոլոգիական հետևանքների վտանգի հետ, իրենց բնույթով հանդիսանում են հանրային շահերից բխող վեճեր, քանի որ առնչվում են հանրային առողջությանը, էկոհամակարգերի ամբողջականությանը և ապագա սերունդների իրավունքներին:

Այդպիսի միջավայրային գործերում դատական վեճերի հանգուցալուծման համար հաճախ պահանջում է բարդ գիտական փորձաքննություն: Անհրաժեշտ է դատարանին օրենսդրորեն տալ լիազորություն իր հայեցողությամբ դիմելու շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդին (ապագայում ստեղծվող)՝ գիտական փորձաքննության եզրակացություն ստանալու նպատակով:

Նման խորհրդատվական մեխանիզմը համահունչ է կանխարգելման և մարդու իրավունքահեն մոտեցումներին և, հատկապես արդարացված է այն դեպքերում, երբ քննարկվում է «միջավայրային էական վտանգի» առկայությունը, քանի որ այն կարող է հիմք ծառայել համաչափ միջամտության և ժամանակավոր հայցի ապահովման համար միջոցներ ձեռնարկելու համար:

Գործող քաղաքացիաիրավական և դատավարական անհրաժեշտ կարգավորումների բացակայությունը անմիջականորեն արտացոլվում է դատական պրակտիկայի վրա՝ շրջակա միջավայրին պատճառված վնասի վերաբերյալ վեճերի քննության ընթացքում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ միջավայրային գործերի զգալի մասը ավարտվում է հայցերի մերժմամբ ոչ այնքան վնասի գոյության բացակայության պատճառով, որքան այն հանգամանքով, որ հայցվորները չեն կարողանում բավարարել գործող օրենսդրությամբ և դատական պրակտիկայով ձևավորված ապացուցման խիստ չափանիշները:

Դասական ապացուցման մոդելը, որը հայցվորի վրա է դնում վնասի առկայության փաստի, դրա չափի, հակաօրինական վարքագծի և պատճառահետևանքային կապի հաստատման հիմնական բեռը, միջավայրային վեճերում հաճախ բխվում է գործնական լուրջ սահմանափակումների:

Նախ՝ նման գործերում պահանջվող ապացույցները ունեն բարձր տեխնիկական և գիտական բարդություն, քանի որ աղտոտման աղբյուրի նույնականացումը, աղտոտման ժամանակի, ձևի, պատճառված վնասի ծավալի հաշվարկը կամ էկոհամակարգային ազդեցությունների գնահատումը ենթադրում են հատուկ գիտելիքներ պահանջող փորձագիտական կամ մասնագիտացված ունակություններ, որոնք սովորաբար դուրս են անհատ քաղաքացիների իրավական, ֆիզիկական և մասնագիտական կարողությունների շրջանակից (Fisher, E., Lange, B., & Scotford, 2019-05-23, էջ 200-220):

Բացի այդ, բնապահպանական փորձաքննությունները, լաբորատոր չափումները և երկարատև մոնիթորինգային ուսումնասիրությունները հաճախ պահանջում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, ինչի բացակայությունը հայցվորների համար գործնականում վերաժվում է դատական պաշտպանության իրավունքի իրացման խոչընդոտի: Այս հանգամանքը առանձնակի կարևորություն է ստանում այն պարագայում, երբ վեճը վերաբերում է սոցիալապես խոցելի համայնքներին կամ սահմանափակ տնտեսական հնարավորություններ ունեցող բնակչությանը (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, 1998):

Ավելին, միջավայրային գործերում վճռորոշ նշանակություն ունեցող ապացույցների զգալի մասը գտնվում է պատասխանողի կամ վերահսկող պետական մարմինների տնօրինության և տիրապետման ներքո՝ ներառյալ արտադրական գործընթացների բնութագրերը, արտանետումների տվյալները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունները կամ թույլտվությունների փաստաթղթերը, ինչպես նաև ենթադրյալ վնասի աղբյուրը: Հայցվորների կողմից այդ տեղեկատվությանը հասանե-

լիության սահմանափակվածությունը խորացնում է կողմերի փաստացի անհավասարությունը և դժվարացնում է ապացուցման պարտականության իրականացումը:

Դատական պրակտիկայում այս կառուցվածքային խնդիրները դրսևորվում են հատկապես այն գործերում, որտեղ ենթադրյալ տուժողները վիճարկում են արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության հետևանքով օդի կամ ջրի աղտոտումը: Նման դեպքերում դատարանները հաճախ մերժում են հայցերը այն հիմքով, որ հայցվորները չեն կարողացել բավարար կերպով հիմնավորել կամ ներկայացնել ապացույցներ, որ հենց տվյալ ձեռնարկությունն է հանդիսացել վնասի անմիջական աղբյուրը, կամ, որ առկա է իրավաբանորեն ճանաչելի պատճառահետևանքային կապ տվյալ գործունեության և արձանագրված բացասական հետևանքների միջև (թիվ ԼԴ2/1919/02/21 գործով 04.07.2022թ-ի որոշումը):

Այս իրավիճակը վկայում է, որ օրենսդրական բացերը ոչ միայն տեսական խնդիր են, այլ նաև ունեն կոնկրետ կիրառական հետևանքներ՝ սահմանափակելով միջավայրային վեճերում դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացումը, ինչպես նաև հանրային շահի դատական պաշտպանության հնարավորությունները:

Եվրոպական միության միջավայրային պատասխանատվության մոդելը ձևավորվել է «աղտոտողը վճարում է» սկզբունքի շուրջ, որը իրավական ամրագրում է ստացել բնապահպանական պատասխանատվության վերաբերյալ 2004/35/EC դիրեկտիվում: Այդ ակտը նախատեսում է ընդլայնված պատասխանատվություն ոչ միայն արդեն իսկ պատճառված վնասի վերացման, այլև հնարավոր վնասների կանխարգելման համար (EU Directive 2004/35/EC on environmental liability with regard to the prevention and remedying of environmental damage):

Դիրեկտիվի տրամաբանությամբ՝ վտանգավոր գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավոր են անհապաղ ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, եթե առկա է շրջակա միջավայրին վնաս պատճառելու սպառնալիք, ինչպես նաև իրականացնել վերականգնողական գործողություններ վնասի առաջացման դեպքում: Միաժամանակ պատասխանատվության կառուցվածքում ակնհայտորեն ուժեղացվում է օպերատորի դերակատարությունը, վերջինս պարտավոր է հիմնավորել, որ իր գործունեությունը համապատասխանում է բնապահպանական պահանջներին և չի ստեղծում իրավական նշանակալի ռիսկ: Այդ մոտեցումը էականորեն մեղմացնում է տուժող կողմի ապացուցման բեռը և արտահայտում կանխարգելման վրա հիմնված կարգավորման տրամաբանությունը:

Գերմանիայի իրավակարգում քաղաքացիաիրավական պաշտպանության կարևոր գործիքներից մեկն է վտանգի կանխարգելման ինստիտուտը, որը դրսևորվում է, ի թիվս այլոց, Գերմանական քաղաքացիական օրենսգրքով ամրագրված պահանջի միջոցով: Այդ կարգավորումը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց դատարանի միջոցով պահանջել վտանգի աղբյուրի վերացում կամ գործունեության դադարեցում դեռևս մինչև վնասի

փաստացի առաջացումը (Գերմանիայի դաշնության Քաղաքացիական օրենսգիրք, հոդվ. 906 և 1004):

Բացի այդ, գերմանական միջավայրային օրենսդրությունը ներառում է պատճառահետևանքային կապի և մեղքի վերաբերյալ մի շարք իրավական կանխավարկածներ այն դեպքերի համար, երբ խոսքը վերաբերում է բարձր վտանգավորության գործունեությանը կամ էկոհամակարգերին սպառնացող ազդեցություններին: Այդպիսով ձևավորվում է կանխարգելիչ ուղղվածություն ունեցող քաղաքացիաիրավական պաշտպանություն, որը թույլ է տալիս դատարաններին միջամտել ռիսկի փուլում՝ առանց սպասելու անդառնալի հետևանքների իրացմանը:

Եզրակացություն

Սույն հոդվածում իրականացված տեսական և համեմատական-իրավական վերլուծության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել Քաղաքացիական և Քաղաքացիական դատավարության օրենսդրությունների համակարգային կատարելագործման մի շարք ուղղություններ, որոնք նպատակաուղղված են միջավայրային վեճերի արդյունավետ դատական լուծման ապահովմանը, կանխարգելիչ պաշտպանության ինստիտուցիոնալացմանը և շրջակա միջավայրի՝ որպես սահմանադրական արժեքի իրավական պաշտպանության ուժեղացմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ նյութաիրավական կարգավորումների փոփոխությունները:

Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության **քաղաքացիական օրենսգրքում** ներդնել ինքնուրույն գլուխ՝ «Շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցումը» վերնագրով, որի շրջանակում կձևավորվի բնապահպանական վնասի քաղաքացիաիրավական պաշտպանության համալիր ինստիտուտ: Այդ գլխում նպատակահարմար է ամրագրել հետևյալ հիմնարար կառուցվածքային տարրերը.

1. «Շրջակա միջավայրին պատճառված վնաս» հասկացության օրենսդրական սահմանումը: Առաջարկվում է օրենսդրորեն սահմանել «շրջակա միջավայրին պատճառված վնաս» կատեգորիան՝ որպես բազմաշերտ իրավական հասկացություն:

2. «Միջավայրային էական վտանգ» կատեգորիայի նորմատիվ ամրագրումը: Առաջարկվում է օրենքով սահմանել «միջավայրային էական վտանգ» հասկացությունը՝ որպես այնպիսի վիճակ կամ գործունեություն, որը հիմնված է գիտականորեն արժանահավատ տվյալների և ողջամիտ հավանականության գնահատման վրա և կարող է հանգեցնել շրջակա միջավայրին կամ մարդու կենսապայմաններին էական կամ անդառնալի վնասի՝ անկախ տվյալ պահին այդ վնասի ամբողջական ապացուցված լինելու հանգամանքից:

Միաժամանակ նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել վտանգի գնահատման հիմնական չափանիշները, այդ թվում՝ պոտենցիալ վնասի տարածական և քանակական ընդգրկումը, անդառնալիության հավանականությամբ:

յունը, վնասի առաջացման ռիսկի աստիճանը, խոցելի սոցիալական խմբերի առկայությունը և կուտակային ազդեցությունների գործոնը:

3. Քաղաքացիական օրենսգրքում պետք է նախատեսել միջավայրային վնասի հատուցման հատուկ նյութաիրավական ռեժիմներ, ներառյալ՝ մեղքի կանխավարկածի ամրագրումը, բարձր վտանգավորության գործունեության դեպքում պատճառահետևանքային կապի կանխավարկածի սահմանումը, ինչպես նաև կանխարգելիչ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ամրագրումը՝ դատարան դիմելու հնարավորությամբ դեռևս վնասի առաջացումից առաջ:

4. Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը լրացնել առանձին կետով՝ սահմանելով, որ շրջակա միջավայրին պատճառված վնասի, միջավայրային վտանգի կանխարգելման և բնապահպանական իրավունքների պաշտպանության պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը չի կիրառվում:

Հայաստանի Հանրապետության **քաղաքացիական դատավարության** օրենսգրքում անհրաժեշտ կարգավորումների փոփոխությունները.

1. Ապացուցման բեռի հատուկ բաշխման մոդելը: Առաջարկվում է օրենսդրորեն սահմանել ապացուցման բեռի խառը բաշխման մոդել միջավայրային վնասի գործերով, որի համաձայն հայցվորի վրա դրվում է վնասի փաստի և վտանգավոր գործունեության հետ դրա ժամանակային և տարածական կապի հիմնավորումը, մինչդեռ պատասխանողի պարտականությունն է ապացուցել միջավայրային էական վտանգի բացակայությունը և կանխարգելիչ միջոցների պատշաճ իրականացումը:

Պետական մարմինների մասնակցությամբ գործերում նպատակահարմար է նախատեսել ապացուցման պարտականության խստացված ռեժիմ պետության և շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող իրավաբանական անձանց համար՝ հաշվի առնելով վերջիններիս ապացուցողական և փաստական տեղեկությունների և փաստերի տիրապետելը, դրանց նկատմամբ վերահսկողական ազդեցությունը, ինչպես նաև պետության պոզիտիվ պարտավորությունները շրջանակը:

2. Փաստական տեղեկությունների հասանելիության անհավասարության հաղթահարման դատավարական մեխանիզմները: Առաջարկվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրել դատարանի ընդլայնված լիազորությունները՝ ապացույցների պարտադիր բացահայտման պարտադրանքի լիազորություն: Դատարանի կողմից նշանակվող փորձագիտական ծախսերը շրջակա միջավայրի նկատմամբ ազդեցություն ունեցող սուբյեկտի վրա դնելու լիազորությամբ, ընդ որում նախապես այդ փորձաքննության համար վճարելու պարտականություն: Դատարանի այս լիազորության նպատակն է ապահովել հանրային շահի պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետության սկզբունքները:

3. Կանխարգելիչ բնույթի բնապահպանական հայցերի քննության հատուկ ընթացակարգի ներդրման անհրաժեշտությունը: Նպատակահարմար է օրենսդրորեն սահմանել միջավայրային վտանգի առկայության վերաբերյալ

հայցերի քննության ողջամիտ ժամկետի մեկնաբանությամբ ավելի կրճատ ժամկետային ընթացակարգ:

Օրենսդրությամբ անհրաժեշտ է նախատեսել հայցի ապահովման հատուկ միջոցների լայն շրջանակ և դատարանին վերապահել ընդլայնված լիազորություններ շրջակա միջավայրի ազդեցության վտանգավոր գործունեության ժամանակավոր կասեցման, գործողությունների իրականացման սահմանափակման կամ հատուկ պայմանների սահմանման ուղղությամբ:

4.Առաջարկվում է օրենսդրորեն սահմանել, որ շրջակա միջավայրի գործերով դատարանը լիազորություն ունենա իր նախաձեռնությամբ դիմել շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդին (խորհրդի ստեղծման պարագայում)՝ պարտադիր փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

Գերմանիայի դաշնության Քաղաքացիական օրենսգիրք

Եվրոպական դատարանի *Case of Fadeyeva v. Russia* 09.06.2005թ. (գանգատ՝ 55723/00):

Եվրոպական դատարանի *Case of Di Sarno and Others v. Italy* 10.01.2012թ. (գանգատ՝ 30765/08):

Եվրոպական դատարանի *Case of Dubetska and Others v. Ukraine* 10.02.2011 թ. (գանգատ՝ 30499/03):

Եվրոպական դատարանի *Case of Kopecký v. Slovakia [GC]*, դիմում № 44912/98, 28.09.2004):

Եվրոպական դատարանի *Case of Öneriyildiz v. Turkey*, GC 30.11.2004թ. (գանգատ՝ 48939/99):

Եվրոպական դատարանի *Case of Pine Valley Developments Ltd and Others v. Ireland*, դիմում № 12742/87, 29.11.1991):

Եվրոպական դատարանի *Case of Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium*, դիմում № 17849/91, 20.11.1995):

Եվրոպական դատարանի *Case of Tătar v. Romania* 27/01/2009թ. (գանգատ՝ 67021/01):

Լոռու մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննված թիվ ԼԴ2/0013/02/23 գործը ըստ հայցի Ազնիվ Հակոբյանի և Կամո Հակոբյան ընդդեմ Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ-ի վնասի փոխհատուցման պահանջի մասին (https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438351115)

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 1995թ. հուլիսի 5-ին (2015թ. դեկտեմբերի 6-ի և 2020թ. հունիսի 22-ի փոփոխություններով)

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված է 2018 թվականի փետրվարի 9-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀՊՏ 1998.08.10/17(50)

ՀՀ սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-753 որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի 03.02.2023 թվականի թիվ ԵԴ/21831/02/19 որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի 11.07.2024 թվականի թիվ ԿԴ/0517/02/10 որոշում

- ՀՀ Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ՀՔԴ3/0016/02/08 որոշում
ՀՀ Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵՔԴ/0036/02/08 որոշում
ՀՀ Վճռաբեկ դատարանի 21.05.2024 թվականի թիվ ՎԴ/0326/05/20 որոշում
ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.10.2024 թվականի թիվ ԵԴ/26800/02/18 որոշում
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն. Շրջակա միջավայրին պատճառված վնասի պարասխառնարվության համեմատական մոտեցումներ, 2003
Birnie, P., Boyle, A., Redgwell, C. (2009) *International Law and the Environment*. Third Edition.
Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, done at Aarhus, Denmark, on 25 June 1998
EU Directive 2004/35/EC on environmental liability with regard to the prevention and remedying of environmental damage
Faure, M. (2003). *Deterrence, insurability and compensation in environmental liability. Future developments in the European Union*
Mill, J. S. (1859), *On Liberty*.
Hart, H. L. A. (1961). *The Concept of Law*. Oxford: Oxford University Press.
Kant, I. (1797). *The Metaphysics of Morals*.
Fisher, E., Lange, B., & Scotford, E. (2019–05–23). *Environmental Law: Text, Cases & Materials*. Oxford: Oxford University Press. Retrieved 22 Mar. 2026, from <https://www.oxfordlawtrove.com/view/10.1093/he/9780198811077.001.0001/he-9780198811077>.
Hammit, J., Rogers, M., Sand, P., & Wiener, J.B. (2011). *The Reality of Precaution: Comparing Risk Regulation in the United States and Europe* (1st ed.). Routledge. <https://doi.org/10.4324/9781936331802>
Krämer, L., Badger, Ch. (2024). *EU Environmental Law*.
Rawls, J. (1971). *A theory of justice*. Harvard University Press.
Sands, P., Peel, J., Fabra A., MacKenzie R. (2018). *Principles of International Environmental Law*.

Карен Туманян

*Соискатель кафедры права, политологии и
международных отношений
Международного университета Евразия
Эл. адрес: kartumanyan@yahoo.com*

СУДЕБНАЯ ЗАЩИТА ПРАВА НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

Статья исследует конституционно-правовые основы гражданско-правового и гражданско-процессуального регулирования возмещения вреда, причинённого окружающей среде, в Республике Армения, исходя из совокупного толкования статей 62 и 12 Конституции, которые обуславливают не только ретроспективное, но и превентивно-регулятивное значение института возмещения вреда.

Статья показывает, что действующее гражданское законодательство по-

строено на классической модели деликтной ответственности, которая не обеспечивает надлежащего реагирования на публичный, многоисточниковый и долгосрочный характер экологического вреда. В материальном праве отсутствуют законодательные определения понятий «вред, причинённый окружающей среде» и «существенная экологическая угроза», а в процессуальном праве — специальные правила распределения бремени доказывания, вследствие чего потерпевшая сторона нередко оказывается перед несоразмерно тяжёлым доказательственным бременем.

В качестве сравнительно-правового материала исследуются принцип «загрязнитель платит», закреплённый в Директиве ЕС 2004/35/ЕС, и германский институт предупреждения опасности, допускающие правовое вмешательство на стадии риска, до наступления вреда.

По результатам анализа предлагается введение в Гражданский кодекс самостоятельной главы об экологическом вреде, законодательное закрепление указанных понятий, установление неприменимости исковой давности по экологическим делам, а также внедрение на процессуальном уровне смешанной модели распределения бремени доказывания и ускоренного производства по превентивным искам.

Ключевые слова: вред, причинённый окружающей среде; превентивная защита; «существенная экологическая угроза»; судебная экспертиза; публичный интерес; эффективная судебная защита; принцип «загрязнитель платит».

Karen Tumanyan

*Ph.D. Student of the Law, Political Science and
International Relations Department
at Eurasia International University
Email: kartumanyan@yahoo.com*

JUDICIAL PROTECTION OF ENVIRONMENTAL RIGHTS

The article examines the constitutional foundations of the civil law and civil procedural regulations governing compensation for environmental damage in the Republic of Armenia, proceeding from the combined reading of Articles 62 and 12 of the Constitution, which establish that the institution of damage compensation carries not only a retrospective but also a preventive and regulatory significance.

The article demonstrates that the current civil legislation is built upon the classical model of liability, which fails to adequately address the public, multi-source, and long-term nature of environmental harm. Substantive law lacks statutory definitions of “damage caused to the environment” and “substantial environmental hazard,” while procedural law provides no special rules on the burden of proof, frequently leaving the injured party facing a disproportionately heavy evidentiary burden.

For comparative analysis, the article examines the “polluter pays” principle enshrined in EU Directive 2004/35/EC and the German institution of preventive hazard abatement, both of which permit legal intervention at the stage of risk, before damage materialises.

As a result, the article proposes the introduction of a dedicated chapter on environmental damage into the Civil Code, the legislative codification of the aforementioned concepts, the exclusion of limitation periods in environmental cases, and, at the procedural level, the adoption of a mixed burden-of-proof model and an expedited procedure for preventive claims.

Key words: damage caused to the environment, preventive protection, “substantial environmental hazard,” judicial expert examination, public interest, effective judicial protection, “polluter pays” principle.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. նոյեմբերի 14-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. նոյեմբերի 18-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: